

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Փականագործ

Աշխատանքի վայր

ք. Երևան, Արթիկ, Գյումրի, Հրազդան

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Առողջության ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Կատարել սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման, նորոգման, տեղադրման, փոխարինման, պահպանման, ինչպես նաև վթարների կանխարգելման և վերացման աշխատանքները;
- Մասնակցել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի՝ կառուցվածքներ, տեխնոլոգիական սարքեր, սարքավորումներ և այլն, կանխարգելիչ նորոգման, փորձարկման և կարգաբերման աշխատանքներին;
- Իրականացնել օրվա կարգավորիչ ջրամբարներում անհրաժեշտ նմուշառումներ և այլ տվյալների պարբերական չափումներ, գրանցումներ և հայտնում համապատասխան ստորաբաժանումներին;
- Հետևել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնների պահպանմանը;
- Խնամքով և պատշաճ օգտագործել Ընկերության կողմից տրամադրված գործիքները, սարքավորումները, անհատական պաշտպանության միջոցները և արտահագուստը:

Պահանջներ

- Սարքավորումների վերանորոգման, սպասարկման և պահպանման կանոնների իմացություն
- Վերանորոգվող սարքավորումների կոնստրուկտիվ առանձնահատկությունների տիրապետում
- Մոնիտորինգային աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիայի իմացություն;
- Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնների իմացություն
- Թիմային աշխատանք
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Փականագործ** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: